**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
26.04.2024 **թվականին կնքված N ԵԱ-ՀԲՄԱՊՁԲ-24/17 գնման պայմանագրի**

ք. Երևան «08» 11 2024թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի ժ/պ Բ. Կիրակոսյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Ս.Լ.Լ-ԳԱԶ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Գասպարյանի, (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 26.04.2024թ. կնքված N ԵԱ-ՀԲՄԱՊՁԲ-24/17 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1, 8.5 կետերը և ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 3)-րդ ենթակետով սահմանված պահանջները և հաշվի առնելով, որ Գնորդի մոտ առաջացել է գնման առարկա հանդիսացող ապրանքների լրացուցիչ քանակի պահանջ, որի համար նախատեսվել են լրացուցիչ ֆինանսական միջոցներ՝ 8,800,000.00 (ութ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 3.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ. «Պայմանագրի գինը կազմում է 96,800,000.00 (իննսունվեց միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն»:

1.2 Պայմանագրի Հավելված N 2-ով սահմանված «Մատակարարման ժամանակացույց*»-ի «ընդհանուր գինը/ՀՀ դրամ» սյունակի «88,000,000.00»-ը փոփոխարինել «96,800,000.00»-ով, իսկ «ընդհանուր քանակը» սյունակի «275,000»-ը փոխարինել «302,500»-ով:

**2. Այլ պայմաններ**

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
| --- | --- |
| «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ | «Ս.Լ.Լ-ԳԱԶ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 | Կոտայք գ. Պռոշյան Գ. Չավուշի 131/7 |
| «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 163078035496 | Հ/Հ 1570020427760100 |
| ՀՎՀՀ 00875439 | ՀՎՀՀ 03316094 |
| Տնօրենի ժ/պ ________ Բ. Կիրակոսյան | Տնօրեն ________ Ա. Գասպարյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելվա
«26» ապրիլի 2024թ. կնք
N ԵՍ-ՀԲՄԱՊՁԲ-24/17 ծածկագրով պայմանա
«08» «11» 2024թ. կնք
թիվ 1 համաձայնա

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դր

| Հ/Հ | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | Ապրանքի անվանումը | Չ/մ | Ընդհանուր քանակը | Վճարումները նախատեսվում է իրականացնել 2024-2025թթ՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | I | Ընդհանուր գինը* |
| 1 | 09411710 | Սեղմված բնական գազ 1 | կգ | 302,500 | 8,800,000 | 17,600,000 | 26,400,000 | 35,200,000 | 44,000,000 | 52,800,000 | 61,600,000 | 70,400,000 | 96,800,000 | 96,800,000 | 96,800,000 |

*Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի հրապարակած, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով: Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա: Եթե արձանագրությունը կազմվում է փվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճա իրականացվում է մինչև 30 օրացուցային օրվա ընթացքում:*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ | «Ս.Լ.Լ-ԳԱԶ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 | Կոտայք գ. Պռոշյան Գ. Չավուշի 131/7 |
| «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 163078035496 | Հ/Հ 1570020427760100 |
| ՀՎՀՀ 00875439 | ՀՎՀՀ 03316094 |
| Տնօրենի ժ/պ ____________ Բ. Կիրակոսյան | Տնօրեն ____________ Ա. Գասպարյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |